

---

ԿՐԿՆԱՍԵՌՈՒԹՅԱՆ ԸՍԲՌՆՈՒՄԸ XVIII–XIX ԴԱՐԵՐԻ  
ԻՆՔՆԱՏԻՊ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

ՀՐԱՆՈՒՇ ՁԱՔՅԱՆ

Պատմական քերականագիտության մեջ հայերենի բայասեռի քննության հարցերն առանձնակի ուշադրության են արժանանում XVII – XVIII դդ. լատինատիպ քերականություններում: Այս շրջանում արդեն գործածվում է քերականական կարգի «սեռ» անվանումը: Կղեմես Գալանոսի, Ոսկան Երևանցու, Հովհաննես Հոլովի, Մխիթար Սեբաստացու և այլոց կողմից բնութագրվում է բայի սեռի քերականական կարգը, որոշվում են սեռերի առանձին տեսակները, խոսվում է նաև բայի խնդրատության մասին:

Չնայած այն հանգամանքին, որ հինհայերենյան բնագրերում մեծ թիվ են կազմում ներգործական և չեզոք սեռերի իմաստները համատեղող (կրկնասեռ) բայերը, հին շրջանի քերականները չեն նկատում այս երևույթը: Նրանք նույն բայի՝ հայցական և այլ հոլովներով լրացումներ ընդունելը բացատրում են ուղղակի բայերի հոլովառությամբ և ոչ նույն բառայություն երկու սեռային իմաստների համատեղմամբ: Պատճառը շատ դեպքերում լատինատիպ քերականությունների գործնական-տեխնիկական բնույթն էր, որը չէր ենթադրում հին բնագրերի գիտական ուսումնասիրություն՝ դրանից բխող հետևություններով:

Բայի սեռը համեմատաբար հանգամանալից քննության է ենթարկվում ինքնատիպ քերականությունների շրջանում (ըստ Գ. Ջահուկյանի՝ XVIII դ. վերջին քառորդից մինչև մեր օրերը):

Սեռի քերականական կարգի քննությանն է անդրադառնում Մ. Չամչյանը «Քերականություն հայկազյան լեզվի» աշխատության մեջ՝ Նա առաջին հեղինակն էր, որ «Գրաբարի քերականությունը վերջնականապես ազատեց հունարանության և լատինարանության բացասական ավանդույթներից, քերականության մեջ մուծված արհեստական «բարեփոխումներին» հակադրեց հին տեքստերի անկանխակալ ուսումնասիրության ու մատենագրական վկայությունների վրա հիմնված քերականական կանոններն ու բացատրությունները»<sup>2</sup>: Մ. Չամչ-

---

<sup>1</sup> Մ. Չամչյան և Գ. Քերականություն հայկազյան լեզուի, Շուշի, 1859:

<sup>2</sup> Գ. Ջահուկյան. Գրաբարի քերականության պատմություն, Երևան, 1974, էջ 303:

յանն ընդունում է բայական չորս սեռ՝ ներգործական, կրավորական, չեզոք և հասարակ, չեզոք բայերի մեջ առանձնացնում է ներգործակերպներ և կրավորակերպներ կամ ձայնակրականներ (անցողականներն առանձին սեռ չի դիտում և դրանք քննում է ածանցավոր բայերի հետ):

Անդրադառնալով բայի խնդրատեսակի հարցերին՝ Չամչյանը, ինչպես և նախորդ շրջանի քերականները, առանձնացնում է սեռի և բնության խնդիրներ<sup>3</sup>:

Ներգործական սեռի բայերի խնդրատեսակի մասին խոսելիս քերականն ընդգծում է վերջիններիս՝ հայցականով սեռի խնդիր լրացում ընդունելու իրողությունը և ավելացնում, որ ներգործական սեռի բայերը կարող են ընդունել նաև բնության խնդիր լրացում տարբեր հոլովներով:

Կարծում ենք, կրկնասեռ և քերականական մեկ սեռ ունեցող բայերի՝ նույն շարքում հայտնվելու պատճառներից մեկն այն է, որ քերականները բայերի խնդրատեսակի մասին խոսելիս քննում են զուտ սեռի և բնության խնդիրները, մինչդեռ կրկնասեռությունը միանգամայն այլ իրողություն է: Բնության խնդիր լրացում ընդունելիս բայն իր սեռը չի փոխում. նա շարունակում է մնալ, ասենք, ներգործական սեռի բայ, որը, իհարկե, կարող է ընդունել նաև այլ հոլովներով լրացումներ: Չամչյանը քննում է ներգործական սեռի բայեր, որոնք կարող են ստանալ տրական հոլովով հանգման խնդիր լրացում (օրինակ՝ տո՛ւր իմաստնոյն պատճառս)<sup>4</sup>: Մինչդեռ կրկնասեռության պարագայում բայը երկու սեռի գաղափար ունի իր իմաստային կառուցվածքում. մի դեպքում մեկի նշանակությամբ ստանում է հայցական հոլովով լրացում, մյուս դեպքում՝ չեզոք սեռի իմաստով՝ այլ հոլովով: Նույն համատեքստում քերականը, չնկատելով այդ իրողությունը, բերում է նաև կրկնասեռ ավանդել բայով օրինակ. «Աւանդեաց իւրոց հնազանդելոցն խորհուրդս»: Ստացվում է այնպես, որ ներգործական սեռի բայի՝ տրականով բնության խնդիր լրացում ընդունելու փաստը նույնացվում է կրկնասեռ բայի խնդրատեսակին: Մինչդեռ սրանք տարբեր իրողություններ են և պետք է քննվեն առանձին-առանձին: Հենց այդ պատճառով էլ գրաբարյան բառարաններում, օրինակ, տալ բայը ներգործական սեռի է (հետայսու՝ նր) է, իսկ ավանդելը՝ նր, չբ: Տալ բայի բոլոր նշանակությունները նր են, իսկ ավանդելը նր իմաստով նշանակում է «պատվեր տալ, հանձնել, փոխանցել», չեզոք սեռի (հետայսու՝ չբ) իմաստով՝ «մոլեզնել»: Ավանդել բայի՝ Չամչյանի բերած օրինակում այն նր է, բայց բայի իմաստային կառուցվածքի քննությունը վկայում է, որ վերջինս ունի

<sup>3</sup> Մ. Չամչյանի ցուցակ, էջ 199:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 476:

նան չք նշանակություն՝ մոլեզուն, գայրանայ. «Չարախօսէս զԲփրեմայ իբրև զաւանդող երնջի ստահակութիւն մոլորէ. այս է, զի օրինացն զլուծն անարգեաց»<sup>5</sup>: Հենց այսօրինակ գործածությունն էլ պայմանավորում է բայի կրկնասեռ լինելու հանգամանքը:

Խոսելով ներգործական սեռի բայերի՝ բնության խնդիր լրացում ընդունելու մասին՝ քերականը բայերն ըստ բայիմաստի բաժանում է 13 խմբի<sup>6</sup>: Ընդհանուր առմամբ նա քննում է ներգործական սեռի մոտ 400 բայ: Պետք է նշել, որ բոլոր խմբերում կան կրկնասեռ բայեր (ըստ գրաբարի բառարանների), որոնք հեղինակի ուշադրությանը չեն արժանանում [միայն առաջին երեք խմբերում զետեղված 230 բայից 70-ը կրկնասեռ բայեր են (մոտ 30 տոկոսը)]. օրինակ՝ աւանդեմ, մատուակեմ, բրդել, պտղաբերեմ, մասնաւորեմ, վարդապետել, յաջողել, դիւրել, հաւասարեմ, յարմարեմ, աշակերտել, պատրաստել, հանդերձել, ստիպեմ, տագնապեմ, հարկեմ, կողոպտել և այլն:

Խոսելով չեզոք սեռի բայերի խնդրատեսակի մասին՝ Չամչյանը քննում է առանձին բայախմբեր (400 բայ՝ 11 խմբով)՝ համապատասխան կանոններով բացատրելով խնդրատեսակները<sup>7</sup>:

Առաջին կանոնը վերաբերում է ուղղական հոլովով լրացում ընդունելուն, որը դիտում է իբրև երկրորդական խնդիր: Օրինակների թվում է՝ նստել բայը, որը Չամչյանը քննում է որպէս չեզոք սեռի բայ, բայց վերջինս կրկնասեռ է. բերենք այդ հանգամանքը փաստող նբ-ով օրինակ՝ «Ձերկաթ խիստ յայնչափ թանձրութենէ նստել, տուայտել և ասեղն մի փոքրիկ գործել» (ընդգծումը մերն է):

Երկրորդ կանոնը վերաբերում է վերջնահոլով տրականով լրացում ընդունող չեզոք սեռի բայերին: Հեղինակի բերած բայաշարքում կա 80 բայ, որոնցից 32-ը կրկնասեռ բայեր են՝ հաւանել, հնազանդիմ, սպասեմ, ծառայեմ, սպասաւորեմ, արբանեկեմ, բարեկամանամ, հաւասարիմ, նմանիմ, պատշաճիմ, պատահիմ, յաջողիմ, վիճակիմ, հաղորդիմ, օգտեմ, երաշխաւորեմ, ներեմ և այլն:

Քերականն ընդգծում է, որ չեզոք սեռի որոշ բայեր պահանջում են հայցական հոլովով լրացումներ (համարում է բնության խնդիր): Հետաքրքիր է, որ որպէս օրինակ բերված բայը՝ լուել, նույնպէս կրկնասեռ է: Ավելորդ է ասել, որ Չամչյանը նկատում է մեզ հետաքրքրող երևույթը, բայց այլ կերպ է մեկնաբանում այն: Ելնելով բնագրային օրինակներից՝ Չամչյանը գալիս է այն հետևության, որ չեզոք սեռի բայերի՝ հայցականով լրացում ընդունելու իրողությունը պայմանավորված է բայիմաստով. «Բայք չեզոքականք կան որք իբր չեզոքական վարին, յորժամ

<sup>5</sup> Նոր բառգիրք հայկազյան լեզվի (այսուհետև՝ ՆՀԲ), հ. 1, Վենետիկ, 1836, էջ 390:

<sup>6</sup> Մ. Չ ա մ չ ե ա ն ց. նշվ. աշխ., էջ 464:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 500:

յարին յանուանս աուրց և ժամանակաց, առնուն զնոսին խնդիր փոխանակ ներգոյականի ի հայցական հոլովն՝ իբր զխնդիր պատահական կամ երկրորդական»<sup>8</sup>: *Որպես օրինակ բերում է գրաբարում սեռային զուգահեռություն ունեցող* հրաժարեմ, հատանեմ, վառեմ, զգուշանամ, շրջեմ *բայերը*: *Ինչ վերաբերում է մյուս բայերին, այն է՝* փութամ, երկնչիլ, սաստկանայր, *ապա վերջիններս ՆՀԲ-ում կրկնասեռ չեն*. երկնչիմ՝ չք, փութամ՝ չք, սաստկանամ՝ չք, տքնեմ՝ չք: *Այստեղ կա մի այլ հետաքրքիր հանգամանք*. *հեղինակը բերում է բնագրային օրինակներ, որոնք վկայում են այդ բայերի՝ հայցականով լրացում ընդունելը, ինչպես օրինակ՝* «Ձտիւ և զգիշեր փութային հասանել յաշխարհն հայոց»: «Տքնեսչիր յօրէնս զցայգ և զցերեկ»: «Դու ես՝ որ բաւես ընձեռել սիրտ այլ և ճանապարհ մի՝ երկնչիլ ի քէն զբովանդակ կենացն սահման»<sup>9</sup>: *ՆՀԲ-ում այս օրինակները չկան, ինչը վկայում է, որ ոչ թե այդ բայերն են միասեռ, այլ դրանք էլ են կրկնասեռ, ուղղակի բառարանագիրների աչքից վրիպել են հեղինակի բերած բնագրային օրինակները*:

*Չեզոք սեռի բայերի՝ հայցականով լրացում ընդունելու փաստը մեկնարանելով որպես որոշակի բայիմաստի պահանջով կատարվող խնդրատություն՝ Չամյանը նույն իրողությունը կապում է նաև ներգործական սեռի բայերի՝ այլ հոլովով լրացում ընդունելու իրողությանը և գրում*. «Որպէս զչեզոքականաց ասացաք, սոյնպէս իմա և զներգործականաց և զկրաւորականաց, ևս և զէականաց, զի տքա ևս ի յարիլն յայսպիսի անուանս՝ առնուն զնոսին ի հայցական հոլովն»<sup>10</sup>: *Հետաքրքիր է, որ նա որպէս օրինակ բերում է օրինել բայի՝* «... օրինեսցէ զքեզ զամ աուրս կենաց իմոց» *նախադասությունը*: *Օրինել բայը նր է և ընդունում է հայցական հոլովով լրացումներ՝ բացառությամբ «յոյն» ոճով՝* «ընդունել զօրհնութիւն» (օրհնվել) *նշանակության (ՆՀԲ, էջ 1056)*: *Ջարմանայի չէ, որ հեղինակի կողմից բերված օրինակում բայն ընդունել է հայցական հոլովով լրացում*: *Այդպէս կլիներ նաև, եթե բայը գործածվեր* «բարեբանել, գովել, մաղթել, սրբագործել, մաքրել, նվիրել և անգամ՝ անիծել, հայիոյել (հեզնական)» *իմաստներով*: *Կարծում ենք, պատճառը հենց բայի նշանակությունն է և ոչ նրան լրացնող բառի՝ ժամանակի իմաստ ունենալը*: *Բնագրային մյուս օրինակներում գործածված բայերը՝* առնել, կանգնել, ուտել, մերժել, փակել *և այլն, հայցական հոլովով լրացում ընդունում են ոչ միայն ժամանակի իմաստ ունեցող բառերի հետ գործածվելիս, օրինակ՝* «Եւ արար աստուած զհաստատութիւն» (ՆՀԲ, էջ 308): «Կանգնելը զնշան տերունական խաչին»<sup>11</sup>,

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 515:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 516:

<sup>10</sup> Նույն տեղում:

<sup>11</sup> *Ա գ ա թ ա ն գ է դ ո ս*. Պատմություն հայոց, Տիգրիս, 1909 (բնագրային համարաբառ, գիրք I), Երևան, 1973, էջ 407:

«Վասն այնորիկ և մեք զձուկն ուտենք և ոչ զմիս»<sup>12</sup>, «Մի՛ մերժեք զմեզ»<sup>13</sup>: «Փակեա՛ գրուրս քո»<sup>14</sup> (ընդգծումները մերն են – Ն. Չ.) և այլն: Այս իրողությունը Չամչյանը չի մեկնաբանում: Ինչպես տեսնում ենք, այս բայերի իմաստային կառուցվածքում սեռային արժեքը միատարր չէ, որով էլ պայմանավորված է վերջիններիս խնդրատական առանձնահատկությունը:

Կանոններից մեկը (11-րդ) վերաբերում է չեզոք սեռի այն բայերին, որոնք հայցականով լրացում են ընդունում, «յորժամ յարին յայնպիսի անուանս որք են արմատք կամ ածանցեալք յայնց բայից, իբր ՚ի բազումս առնուն զնոսին»<sup>15</sup>: Նկատենք, որ վերոհիշյալ բայերը հայցականով լրացում են ընդունում ոչ միայն նույնարմատ լրացում ունենալու, այլ նաև ուրիշ դեպքերում: Օրինակ՝ Չամչյանը բերում է հետևյալ օրինակները՝ «Ձնոյն նահատակութիւն նահատակեցաւ և աշխարհս հալոց»: «Ընկալցին զանարգանս իւրեանց մուրրութեամբն գոր մուրեցան»: «Տրտմեցաւ Յովնան տրտմութիւն մեծ (այսինքն՝ տրտմութեամբ մեծաւ)»<sup>16</sup>: Բնագրային այս օրինակների կողքին ՆՇԲ-ում կան նաև այլք՝ «Ձերիս վկայսն նահատակեալք, Բագում վկայս Քրիստոսի սպան և նահատակեաց: «Ոչ կամաւ առնէ գսա, այլ դնն տայ առնել և տրտմեաց զմեզ» (ՆՇԲ, էջ 899) (բոլոր ընդգծումները մերն են): Մրանից հետևում է, որ այս և նման այլ բայերի հայցականով լրացում ընդունելու փաստը պայմանավորված է ոչ թե նույնարմատ լրացում ունենալով, այլ բայի կրկնասեռությամբ:

Ներգործական սեռի բայերի մասին խոսելիս Չամչյանը, բերելով բնագրային համապատասխան օրինակներ, գրում է. «Ոմանք ՚ի ներգործական բայից փոխանակ հայցականի առնուն զխնդիր սեռի ՚ի տրական հոլովն. «Երկրպագեացուք աստուածային սուրբ նշանիս»: Եւ ընդ հակառակն ոմանք ՚ի չեզոքական բայից՝ ուրուք ուրուք ներգործականապէս վարելով, խնդիր սեռի առնուն ՚ի հայցական հոլովն. Եթէ տղայքդ լռեն գորհնաբանութիւն»<sup>17</sup>: Նկատենք, որ ընդգծված բայերը գրաբարյան բառարաններում ճանաչվում են իբրև կրկնասեռ բայեր՝ երկրպագել (ՆՇԲ, 703, ԱԶԲ<sup>18</sup>, 281, ԳԲ<sup>19</sup>, 415, ԳՈԻԲ<sup>20</sup>, 110) և լռել (ՆՇԲ, 905, ԱԶԲ, 361, ԳԲ, 543, ԳՈԻԲ, 149):

<sup>12</sup> Եղիշէ. Վասն Վարդանայ և հայոց պատերազմին, Երևան, 1957 (բնագրային համաբարբառ, գիրք II), Երևան, 1978, էջ 280:

<sup>13</sup> Ա գ ա թ ա ն գ է դ ո ս. նշվ. աշխ., գիրք II, Երևան, 1973, էջ 111:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 241:

<sup>15</sup> Մ. Չ ա մ չ ե ա ն ց. նշվ. աշխ., էջ 518:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 519:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 528:

<sup>18</sup> Առձեռն բառարան հայկազեան լեզուի (II տպագր.), Վենետիկ, 1865:

<sup>19</sup> Ռ. Ղ ա գ ա ր յ ա ն. Գրաբարի բառարան, Երևան, 2000:

Ինչպես տեսնում ենք, Չամչյանը խոսում է հենց բայական կրկնաստեղծության մասին, սակայն նման եզրահանգում չի կատարում: Չնայած նա նկատում է, որ *-եմ-ով* վերջացող որոշ ներգործական բայեր գործածվում են իբրև չեզոքականներ, օրինակ՝ հնարաւորեմ, լսեմ, խնայեմ, հնչեմ, բղիսեմ, ծագեմ, համակեմ, այնուհանդերձ երկրորդ սեռի նշանակության բայիմաստի գործածությունը բոլոր դեպքերում համարում է պատահական, երկրորդական, հարմարական բնության խնդիր և ոչ թե կրկնաստեղծության հատկանիշ<sup>21</sup>:

Բայի սեռի քննությանն են անդրադարձել նաև Մեսրոպ Տեր-Հարությունյանը<sup>22</sup> և Գաբրիել Ավետիքյանը<sup>23</sup>: Նրանք որևէ նոր բան չեն ավելացնում Չամչյանի ասածին և, հետևելով վերջինիս օրինակին, գրաբարի բայերի այն բոլոր իմաստները, որոնք պայմանավորում են կրկնաստեղծությունը, հիմնավորում են բնության խնդիր ստանալու հանգամանքով:

Բայերի խնդրառության հարցը հանգամանալից քննության է ենթարկում Վ. Չալրիսյանը: Խոսելով սեռի և բնության խնդիրների մասին՝ նա անդրադառնում է մի խումբ բայերի (յադթեմ, պաշտպանեմ, խնայեմ, լսեմ, կարդամ և այլն)՝ հայցական և տրական հոլովներով լրացումներ ընդունելու հարցի քննությունը: Հեղինակը նկատում է, որ «կարդամ երբ կանչել կամ ընթեռնուլ նշանակե՛ հայցական, իսկ երբ օգնութեան կանչել նշանակե՛ առ նախդրի տրական կառնու» (ընդգծումը մերն է): Քննարկումը ցույց է տալիս, որ «Շատ բայեր՝ մեկ նշանակութեամբ՝ մեկ հոլով՝ եւ մեկալ նշանակութեամբ ուրիշ հոլով խնդիր կառնուն»<sup>24</sup>: Համապատասխան օրինակներով քննելով (նորոգիմ, փոփոխիմ, շրջիմ, շարժիմ, մերժիմ, մեկնիմ և այլ) բազմաթիվ բայեր՝ Չալրիսյանն ընդգծում է. «Ինչպես որ երբեմն չեզոք բայը կրաւորականի ոյժ կունենայ, նոյնպես ալ շատ անգամ ներգործական բայի մը կրավորականն իբրեւ պարզապէս չեզոք բայ կը գործածուի»: (Օրինակ՝ «Մերժեաց զնոսա յատենի անտի»: «Մերժեցան նոքա յատենի անտի»)<sup>25</sup>: Նշենք, որ այս բոլոր բայերի սեռային հատկանիշը միատարր չէ:

«Բայերուն խնդիրներուն վրա զանազան գիտելիք» գլուխը Վ. Չալրիսյանը նվիրում է հենց նույն բայի՝ տարբեր հոլովներով լրացումներ ընդունելու հարցի քննությանը<sup>26</sup>: Քերականը խոսում է չեզոք սեռի բա-

<sup>20</sup> Լ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Գրաբարի ուսումնական բառարան, Երևան, 2013:

<sup>21</sup> Մ. Չ ա մ չ ե ա ն ճ. նշվ. աշխ., էջ 474:

<sup>22</sup> Մ. Տ է ր - Յ ա ր ո թ ի ն ե ա ն. Քերականություն, Կոստանդնուպոլիս, 1808, էջ 156–161:

<sup>23</sup> Գ. Ա լ ե տ ի ք ե ա ն. Քերականություն հայկական, Վենետիկ, 1815, էջ 71:

<sup>24</sup> Վ. Չ ա լ ը ի ս ե ա ն. Քերականություն հայկազեան լեզուի, Վիեննա, 1885, էջ 229:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 231:

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 238–240:

յերի՝ հայցականով խնդիր լրացում ընդունելու մասին. «Երբեմն չէզոք բայերն իբրև ներգործական բանելով՝ հայցական խնդիր սեռի կ'առնուն»: Նկատենք, որ իբրև օրինակ բերում է կրկնասեռ բայեր՝ շնչել, շրջել, ողբալ և այլն:

Չալրիսյանը ևս նկատում է, որ «Աւելի յաճախ՝ չէզոք բայերն իրենց արմատն իրենց հայցական խնդիր սեռի կառնուն, օրինակ՝ զարմանալ զարմացումն, երկեան երկիւղ, կոծեցին կոծ»<sup>27</sup>: Որոշ բայերի խնդրառական այս առանձնահատկությանն անդրադարձած քերականները (այդ թվում և Չալրիսյանը) խորամուխ չեն եղել հարցի քննության մեջ, այլապես կնկատեին, որ այս բայերը հայցականով լրացում են ընդունում ոչ միայն իրենց արմատով լրացում ունենալու դեպքում: Օրինակ, զարմանալ բայը, ինչպես նշվում է ՆՀԲ-ում (յարմարական խնդրով յն. հյ. ուճով) հայցականով լրացում է ընդունում ոչ միայն «Չարմացաւ Իսահակ զարմացումն մեծ յոյժ» տիպի կառույցներում, այլև՝ «Չարմանայր գառաքինութիւն ծերոյն: Չայն ևս զարմացեալ էին վասն նորա ծերակոյտն (ՆՀԲ, էջ 721) և այլն»: Նույնը պետք է ասել Չալրիսյանի կողմից վկայվող կոծել բայի մասին. «Քանզի հանապազ զցա՛յգ եւ զցերե՛կ ի գերեզմանս եւ ի լերինս աղաղակեր, եւ կոծէր /ծեծել/ զանձն իւր քարամբք»: «Լային ամենեքեան՝ եւ կոծէին զնա» (ՆՀԲ, էջ 1109) (ընդգծումը մերն է):

Քննությունը շարունակելով՝ Չալրիսյանը գրում է. «Նոյն կերպով չէզոք նաև ներգործական եւ կրատրական բայերուն խնդիրը գործիականի տեղ հայցական կը դրուի, երբ որ այն խնդիրը բային հետ նոյն նշանակութիւն ունենայ, կամ թէ զանիկա յարաբերե՛՛ ինչպէս՝ որ, նոյն դերանունները, օրինակ՝ ննջել, խնդալ, յառել բայերը»<sup>28</sup>: ՆՀԲ-ում կան բնագրային այնպիսի օրինակներ («Եղբորորդիւ իմ յառեաց զձեռն իւր ընդ ծակոյն» (էջ 338), «Խնդացին զթագաւորելն նորա ՚ի վերայ իւրեանց» (էջ 951)), որոնք հակասում են քերականի պնդմանը:

Վ. Չալրիսյանը, խոսելով կրավորական սեռի բայերի՝ հայցական հոլովով լրացում ընդունելու մասին, թվարկում է մի քանի բայ՝ վարդապետիմ, իրատիմ, հրամայիմ, պահանջիմ: Ինչպէս վկայում են գրաբարի բառարանները, առաջին երկու բայը նբ//հբ (հասարակ սեռի բայ) են, երրորդը՝ նբ, իսկ վերջինը՝ նբ//կբ (կրավորական սեռի բայ), ուստի տարօրինակ չէ, որ դրանք կարող են պահանջել հայցական հոլովով դրված լրացում: Այդ նույն տրամաբանությամբ հայցականով խնդիր են պահանջում հեղինակի կողմից առանձնացված մյուս խմբի բայերը. «Հայցական սեռի խնդրով կրավորական ձև կը գրուին այն գործողությանը բայերը՝ զորոնք մարդ իր վրայ կը կատարէ՝ ազանիմ, զգենում,

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 239:

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 239:

սփածանիմ, զգածնում *և այլն*<sup>29</sup>: Ազանիմ բայը գրաբարում հբ, չբ է (ՆՀԲ, էջ 2), սփածանիմ՝ նբ//չբ (ՆՀԲ, էջ 765), զգածանիմ՝ հբ, չբ (ՆՀԲ, էջ 724), զգենում՝ նբ, հբ (ՆՀԲ, էջ 727):

*Ինչպես տեսնում ենք, Չալըխյանը նկատում է բայական երկու սեռի նշանակության համատեղումը մեկ բայի մեջ, բայց, ինչպես իր նախորդները, հարցն այլ կերպ է մեկնաբանում:*

*Բայի սեռի և խնդրատեսակի վերաբերյալ եղած ուսումնասիրությունների մեջ առանձին տեղ է գրավում Ա. Բագրատունու աշխատությունը, որի երկրորդ գլուխը նվիրված է բայի խնդրատեսակի հարցերին*<sup>30</sup>:

*Հեղինակը տարբերակում է սեռի և բնության խնդիրներն ու առանձին-առանձին քննում իր կողմից ճանաչված բոլոր չորս սեռերի (էական, ներգործական, կրավորական, որի մեջ է դասում նաև «միջին կամ հասարակ» կոչվող բայերը, և չեզոք) խնդրատեսակի հարցը:*

*Քննելով ներգործական բայերի խնդրատեսակի հարցը՝ նա ևս ընդգծում է, որ երբ բայի խնդիր է դառնում նույն բայարմատը կամ իմաստով մոտ բառ, ապա գործիական հոլովի փոխարեն վերջինս դրվում է հայցական հոլովով (Բագրատունին ևս մյուս քերականների նման հիշատակում է այնպիսի բայեր, որոնք գրաբարում կա՛մ կրկնասեռ են, կա՛մ ունեն սեռային զուգահեռություն: Հենց դա էլ պայմանավորում է վերջիններիս խնդրատեսակի առանձնահատկությունը). «Անուանք՝ պարզ արմատք բայից կամ ածանցեալք, վարին յաճախի հայցական փոխանակ գործիականի առ ամենայն բայիք. Մեղոյց զմեղս, կոծեցան կոծ, անեծ անեծս, փորձեաց փորձ, մահ մեռանիմք, ննջեցեն զքուն, թմբբեցին քուն, աղաղակեմ ձայն, վառեցաւ զգին *և այլն*»<sup>31</sup>:*

*Հեղինակը չեզոք սեռի բայերի՝ հայցականով լրացում ընդունելու փաստը կապում է նաև շարահյուսական կառույցների հետ, մասնավորապես՝ որ հարաբերական դերանունով բային կապվող խնդրի և փոխանուն ածականի հետ. «Նոյնպես վարի յաճախ և որ դերանուն, որ զարմատ բային կամ զմերձաւոր ինչ յարաբերէ, հայցական փոխանակ գործիականի. օրհնութիւն գոր օրհնեաց, մեղս գոր մեղաւ, մոլորութեամբ գոր մոլորեցան և այլն»: «Նոյնպես և այլ զինչ և է անուն ածականի՝ որ զարմատ բային ակնարկէ, դնի երբեմն հայցական փոխանակ գործիականի. Չկէս յանցանաց քոց ոչ յանցեաւ (իմա՝ կիսով յանցանացոյ), Ո՛չ գնոյնս պարտ էր չարչարել Քրիստոսի (իմա՝ գնոյն չարչարանս), Չայս ամենայն չարչարեցաւ (իմա՝ զայս ամենայն չարչարանս), զայսոսիկ ախտանամք (իմա զայսոսիկ ախտս) և այլն»<sup>32</sup>:*

*Նկատենք՝ Բագրատունու բերած փաստարկները ցույց են տալիս, որ նշված բայերը գրաբարում կրկնասեռ են:*

*Չեզոք սեռի բայերի՝ հայցականով լրացում ընդունելու հանգամանքը հեղինակը կապում է ներգործական սեռի նշանակություն ստանալու հետ. «Չեզոք ՚ի ներգործական նշանակութիւն՝ առնուն հայցական փոխանակ այլ և այլ*

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 240:

<sup>30</sup> Ա. Բ ա գ ր ա տ ու ն ի ի. Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 274:

<sup>31</sup> Նույն տեղում, էջ 283:

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 283–285:



հոլովից»։ «Ամենայն ոք բնակել իցէ զլեռնակողմն (փոխ՝ ի լեռնակողմն)», «Եսթեր՝ զոր ամուսնացաւ թագաւորն. (փոխ՝ ընդ որում)», «Ոչ հաճեցան զհօրն հրաման. փոխ՝ (ընդ հօրն)», «Զի՛նչ ևս պակաս իցեմ (փոխանակ՝ ի ւ կամ յորմէ՞)»<sup>33</sup>։ *Քերականը չի փորձում մեկնաբանել, թե ինչ հիմունքով է չեզոք սեռի բայի իմաստային դաշտում համատեղվում նաև ներգործական սեռի նշանակությունը։ Այս հարցում Բագրատունին ընդհանրություն է տեսնում ներգործական սեռի բայերի խնդրատության հետ. «Եւ երբեմն ներգործականք առեալ խնդիր զհայցականսդ զինքն, զանձն, զքեզ, զձեզ, նոքօք հանդերձ իբրև չեզոք բայ նշանակեն։ Այր զարամբ զինքն ՚ի միջոյ անտի ՚ի բաց մերժեր (իմա՛՝ մերժիւր, ի բաց էլանէր)»։ «Թեթևացուցեալ զինքն յախտիցն՝ առողջութեամբ լինի (իմա՛՝ թեթևացուցեալ յախտիցն)»։ «Դուք զինուորեցէք զձեզ ընդ մեզ (իմա՛՝ զինուորեցարուք...)»<sup>34</sup>։*

*Հետաքրքիր է, որ կրկնասեռության երևույթը նկատված է, անգամ մեկնաբանված, բայց որպես այդպիսին արժեքավորված չէ։ Փորձելով ինչ-որ բացատրություն գտնել չեզոք սեռի բայերի՝ հայցականով լրացում ընդունելու համար՝ Բագրատունին (և ոչ միայն) այն պայմանավորում է խնդրի բառային իմաստով, այն է՝ ժամանակ, ձև, չափ, ճանապարհի անուն նշանակող բայերը նախորդիվ տրականի կամ գործիականի փոխարեն ընդունում են հայցական հոլովով լրացում. «Յաւուրսն յայտսիկ յամս քսան՝ զոր շինեաց Սողոմոն զերկոսին տունսն (իմա՛՝ յորս շինեաց)»։ «Զմանկութիւնն ոչ անբան զբաղանօք զարգացայ. (իմա՛՝ զմանկութեան ժամանակն, ՚ի մանկութեան)»։ «Անկաւ զբանական՝ աւուր գնաց աստի և աւուր գնաց անտի շուրջ բանական (իմա՛՝ ՚ի գնացս կամ գնացիւք միոյ աւուր)»։ «Զնոյն չափ ողորմածութեամբ բժշկել (իմա՛՝ նովին չափով)»<sup>35</sup> և այլն։*

*Շարունակելով հարցի քննությունը՝ Բագրատունին անդրադառնում է բնության խնդրին և շատ հետաքրքիր մեկնաբանություն է անում. «Զի մի և նոյն բայ առնու երբեմն այլ և այլ հոլովս նովին մտօք, ևս և փոխանակ հայցականի, զոր օրինակօք ինչ յանդիման արասցուք աստանօր միանգամայն. ակնկալել յայն, զայնմանէ, զայն։ Ամբաստանել զանձնէ, զանձն։ Սկսանել զայն կամ յայն։ Կառավարել զնա, նմա և այլն»<sup>36</sup>։*

*Ինչպէս տեսնում ենք, Բագրատունին ոչ միայն նկատում է նույն բայի՝ հայցական և այլ հոլովներով լրացում ընդունելու փաստը, այլև դասակարգում է այդ բայերը՝ ցույց տալով, թե ինչ հանգամանքով է պայմանավորված այդ իրողությունը։ Այս կարևոր քայլն անելով հանդերձ՝ քերականը երևույթին այլ անուն չի տալիս, եթե ոչ շեղում խնդրատության ընդհանուր օրինաչափություններից։*

*Բայի քննությանն է անդրադարձել նաև Ա. Այտրնյանը։ Նա հայ քերականագիտության մեջ առաջինն է, որ վերջնականապես ընդունում է բայի երեք*

<sup>33</sup> Նույն տեղում, էջ 288:

<sup>34</sup> Նույն տեղում, էջ 288:

<sup>35</sup> Նույն տեղում, էջ 289–290:

<sup>36</sup> Նույն տեղում, էջ 301:

սեռ՝ ներգործական, կրավորական, չեզոք<sup>37</sup>: Հեղինակն անդրադառնում է բայերի խնդրատեսակները, խոսում է սեռի և բնության խնդիրների մասին: Ինչպես նախորդ քերականները, Այտընյանը ևս, սեռի խնդիր ասելով, հասկանում է ներգործական և կրավորական բայերի պահանջած խնդիրը: Միտքը շարունակելով՝ նա նշում է. «Քանի մը ներգործական բայեր հայցականի տեղ տրական հոլով խնդիր-սեռի կ'առնուն. և են՝ յաղթել, աղաչել, օգնել, սպասել, տիրել, խնայել, հետևիլ, նայիլ և այլն»<sup>38</sup>: Քերականը նկատում է, որ դրա պատճառը բայիմաստն է. բայի իմաստային կառուցվածքում առկա իմաստներից մեկը պահանջում է մի հոլովով լրացում, մյուսը՝ բոլորովին այլ: Ինչ վերաբերում է չեզոք սեռի բայերի խնդրատեսակները, Այտընյանը գրում է. «Երբեմն չեզոք բայերն էլ հայցական խնդիր կ'առնուն-հասարակօրէն նոյն բային արմատը կամ բայանունը, օրինակ՝ անկում մ'իսկաւ, յաւիտենական քունդ կու քնանաս և այլն»<sup>39</sup>:

Ինչպես տեսնում ենք, Այտընյանն ընդգծում է այն փաստը, որ նույն բայի իմաստային կառուցվածքում համատեղվում են երկու սեռի նշանակություններ, որոնցից մեկը պահանջում է հայցական, մյուսը՝ այլ հոլովով դրված լրացում: Փաստորէն, քերականը այս իրողությունը չի դիտում որպէս շեղում ընդհանուր օրինաչափությունից կամ էլ չի համարում երկրորդական, պատահական խնդիր, այլ լեզվական առանձնահատուկ իրողություն, բայց այդ երևույթը ուղղակի անունով չի կոչում:

Այսպիսով՝ ինքնատիպ քերականությունների շրջանում բայի սեռի հարցի բնությունը դրվում է այլ հարթության վրա. ճանաչվում է բայի երեք սեռ, դասակարգվում են սեռի և բնության խնդիրները: Չեզոք սեռի բայերի՝ հայցականով և ներգործական սեռի՝ այլ հոլովներով լրացումներ ընդունելու իրողությունը կա մ անտեսվում է, կա մ մեկնաբանվում որպէս բնության խնդիր լրացումներ՝ շատ դեպքերում դա պայմանավորելով բայիմաստով կամ նույնարմատ լրացում ունենալով: Ա. Բագրատունին և Ա. Այտընյանը ոչ միայն նկատում, այլև նկարագրում են քերականական երկու սեռի նշանակության համատեղումը բառարանային նույն բառույթում, բայց որևէ անունով այդ երևույթը չեն կոչում:

Կրկնաստեղծության երևույթի ճանաչմանը մնում է ընդամենը մեկ քայլ, որն էլ անում են նոր շրջանի քերականները<sup>40</sup>:

<sup>37</sup> Ա. Այտընյան. Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866, էջ 52:

<sup>38</sup> Նույն տեղում, էջ 154:

<sup>39</sup> Նույն տեղում, էջ 155:

<sup>40</sup> Տե՛ս, մասնավորապէս, Հ. Աճառյան. Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների, հ. 4, Երևան, 1961, հ. 5, Երևան, 1965: Վ. Առաքելյան. Հայերենի շարահյուսություն, հ. 2, Երևան, 1953: Ա. Աբրահամյան. Բայը ժամանակակից հայերէնում, Երևան, 1962, Վ. Քոսյան. Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Երևան, 1963, Ն. Պատնասյան, Հ. Օհանյան. Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1968, Մ. Ասատրյան. Բայի սեռերը ժամանակակից հայերէնում, Երևան, 1978, Հ. Հարությունյան. Կառավարումը ժամանակակից հայերէնում, Երևան, 1988, (տե՛ս նաև Տ. Սաֆարյան. Հայերենի կրկնասեռ բայերը, Երևան, 2013):

## ВОСПРИЯТИЕ ДВУЗАЛОГОВОСТИ В ОБЛАСТИ ОРИГИНАЛЬНОЙ ГРАММАТИКИ XVIII–XIX ВЕКОВ

ГРАНУШ ЗАКЯН

### Резюме

В XVIII–XIX веках в оригинальной грамматике явление двузалоговости глаголов рассматривается с новой точки зрения. В трудах этого периода содержатся грамматические правила и комментарии, которые основываются на непредвзятых исследованиях старых текстов и библиографических данных. Вместе с тем, в одной словарной и морфологической единице не наблюдаются свойства управления глаголов со смысловым совмещением действительных и средних залогов (в современном понимании, двузалоговость). Имеющиеся факты пренебрегаются или комментируются как приглагольные дополнения. М. Чамчян отмечает, что некоторые глаголы действительного залога употребляются также в значениях среднего залога, однако такое употребление считается случайным или второстепенным. А. Багратуни и А. Айтнян отмечают и описывают грамматическую совместимость двух залогов в смысловом строении глагола, но не дают никакого названия этому явлению.

## DOUBLE GENDER PERCEPTION IN ORIGINAL GRAMMARS OF THE 18TH – 19TH CENTURIES

HRANUSH ZAKYAN

### Summary

In the 18th–19th centuries the perception of the double gender was explained by another angle in the original grammar. The existing grammar rules and explanations of the given period compositions are based on unprejudiced studies of ancient texts and bibliographical testimonies. Besides, according to the modern perception, the governing specifics of double gender verbs which compare active and neutral gender meanings in a single vocabulary lexeme are not noticed. All existing facts are ignored or interpreted as additions acquired by the verb meaning. M. Chamchyan notes that some verbs of active gender are also used in neutral gender, however, such a use is considered as casual or secondary. A. Bagratuni and A. Aintyan notice and describe the compatibility of the genders in the word semantic structure, but they don't give any name to this phenomenon.